ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Սուրեն Մինասյանի՝ 2024 թվականի ապրիլի 7-ից 14-ը Փարիզ գործուղման ընթացքում կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝ Սուրեն Մինասյան,

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ք. Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն, 2024 թվականի ապրիլի 7-ից 14-ը,

4. Հրավիրող կողմը՝Ֆրանսիական զարգացման գործակալություն (AFD),

5.Գործուղման նպատակը՝մասնակցություն Ֆրանսիական զարգացման գործակալության կողմից կազմակերպված՝ Ֆրանսիայի Հանրապետության ջրային և գյուղատնտեսական ոլորտների կառավարման մոդելների ճանաչողական այցին,

6. Քննարկված թեմաները: Այցի շրջանակներում Ֆրանսիական զարգացման գործակալության (AFD), ինչպես նաև Ֆրանսիայի Հանրապետության ջրային ռեսուրսների ու գյուղատնտեսության կառավարման համակարգում ընդգրկված այլ հաստատությունների ներկայացուցիչների կողմից հանգամանալիորեն ներկայացվել են Ֆրանսիայում ջրային ոլորտի և գյուղատնտեսության կառավարման մոդելները՝ ըստ երկրի առանձին շրջանների ու դեպարտամենտների:

Գործուղման շրջանակներում առանձին այցեր են կազմակերպվել Ֆրանսիայի Օքսիտանիա (Occitania) և Պրովանս-Ալպեր-Լազուր ափ (Provence-Alpes-Côte d'Azur) շրջաններ՝ հաշվի առնելով, որ Ֆրանսիայում ջրային ոլորտի կառավարումն ու գյուղատնտեսության աջակցությունն ըստ վարչական շրջանների ունեն կառավարման առանձին մոդել:

7. Հանդիպումները, ելույթները՝

Այցը մեկնարկել է ***Ներքին Ռոնի և Լանգեդոկի զարգացման ընկերության խմբի*** (BRL Group) ***ինժինիրինգային դուստր ընկերության*** (BRLi) ներկայացուցիչների հետ (ք. Նիմ) հանդիպմամբ, որի ընթացքում վերջիններս ներկայացրել են իրենց փորձը ջրային ռեսուրսների, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի կառավարման բնագավառում, կիսվել իրենց պատկերացումներով ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, կլիմայի փոփոխությունների հաղթահարման, ինչպես նաև ոլորտում թվայնացման և նորարարական լուծումների տեղակայման շուրջ: Առանձին այց է կազմակերպվել նաև ընկերության կողմից կառավարվող պոմպակայան, ներկայացվել է ջրային ենթակառուցվածքի թվային կառավարման համակարգը:

Նմանօրինակ հանդիպում է կայացել ***Պրովանսի ջրանցքի ընկերության*** (Société du Canal de Provence) ներկայացուցիչների հետ (ք. Էքս ան Պրովանս), որի ընթացքում վերջիններս ներկայացրել են ընկերության գործունեության տարածքում խմելու և ոռոգման ջրի մատակարարման կազմակերպումը, ենթակառուցվածքների արդիականացման ու ավտոմատացման ուղղությամբ տարած աշխատանքները, ջրի սակագնի հաշվարկման սկզբունքները և այլն: Ընկերությունը, բացի ջրային ռեսուրսների կառավարման բուն գործունեությունից, տրամադրում է խորհրդատվական ծառայություններ Ֆրանսիայի տարածքում և ոչ միայն (այդ թվում՝ Հայաստանում):

Հաջորդ հանդիպումը կայացել է ***Սեն-Ժուլիեն ջրանցքի լիազորված արհմիությունների ասոցիացիայի*** (Association Syndicale Autorisée du Canal de Saint-Julien) ներկայացուցիչների հետ (ք. Կավայյոն): Ասոցիացիան նախորդ ընկերություններից տարբերվում էր իր կազմակերպական կառուցվածքով, և այն ոչ թե մասնավոր ընկերություն էր, այլ ջրանցքի ոռոգման գոտում գտնվող հողի սեփականատերերի միություն: Ասոցիացիայի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին ջրանցքի շահագործման և ջրի մատակարարման սկզբունքները, ասոցիացիայի գործունեության կարգը, այդ թվում՝ ֆինանսավորման մեխանիզմները:

Պրովանս-Ալպեր-Լազուր ափի տարածաշրջանային խորհրդի փոխնախագահ/Էմբրունի քաղաքապետի հետ կայացած հանդիպման ընթացքում (ք. Էմբրուն) քաղաքապետի կողմից ներկայացվել է Հայաստանի հետ ունեցած մինչ օրս ունեցած համագործակցությունը,

մասնավորապես՝ Լոռու մարզի հետ գյուղատնտեսության, ջրային ոլորտի կառավարման և կլիմայի փոփոխությունների հարմարեցման ուղղությամբ: Այնուհետև քննարկվել են տարածաշրջանում ջրային ռեսուրսների ու գյուղատնտեսության կառավարման մեխանիզմները, գյուղատնտեսներին ֆինանսական աջակցության տրամադրման մեխանիզմները և այլն: Հանդիպման ընթացքում ***Ջրի միջազգային գրասենյակի*** (OiEau) ներկայացուցչի կողմից ներկայացվել են գրասենյակի գործունեության կարգը, Ֆրանսիայում ջրային ոլորտի կառավարումը, ռեսուրսների պլանավորումը և ջրի քանակային կառավարման փորձը:

Բարձր Ալպերի տարածաշրջանի գյուղատնտեսության պալատի (Chambre d'Agriculture des Hautes-Alpes) նախագահի հետ կայացած հանդիպման ընթացքում (ք. Գափ) ներկայացվել են տարածաշրջանում պալատի կողմից ֆերմերներին տրամադրվող աջակցության մեխանիզմներն ու ծավալները, պալատի գործունեության կարգն ու գյուղատնտեսության դերը տարածաշրջանում, ինչպես նաև ֆերմերներին Ֆրանսիայի կառավարության կողմից տրամադրվող սուբսիդիաների ու ֆինանսատեխնիկական այլ աջակցության մանրամասները: Նույն հանդիպման ընթացքում Պրովանս-Ալպեր-Լազուր ափի շրջանի ***Հողաշինության և գյուղական բնակավայրերի ընկերության*** (Société d'Aménagement Foncier et d'Etablissement Rural) ներկայացուցիչների կողմից ներկայացվել են շրջանում գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների կառավարման, դրանց առքուվաճառքի գործարքների կազմակերպման կարգը, հողի գնի կայունության պահպանման ուղղությամբ ֆրանսիական փորձը:

Սերե-Պոնսոն ջրամբար կայացած այցի ընթացքում (ք. Ուբայ-Սերե-Պոնսոն) ***«Ֆրանսիայի էլեկտրաէներգիա» ընկերության*** (Électricité de France) ներկայացուցիչների կողմից ներկայացվել են Դյուրանս գետի հովտում ջրային ռեսուրսների՝ էլեկտրաէներգիայի ստացման նպատակով օգտագործման ֆրանսիական մոդելը, ջրամբարի գործունեության ու շահագործման կարգը, վերջին տարիներին կլիմայի փոփոխության ազդեցությունը շրջանում ջրային ռեսուրսների կառավարման քաղաքականությունների վրա:

Այնուհետև այց է կատարվել Բարձր Ալպերի հարավում տեղակայված Տալարդի շրջանում պտղատու ծառերի ինտենսիվ մշակման այգի (գ. Վենտավոն)՝ ծանոթանալու այգու մշակման մոդելին: Սեփականատեր ֆերմերի կողմից ներկայացվել են տարածաշրջանում

գյուղատնտեսական գործունեություն ծավալելու մանրամասները, իրականացվող ծախսերի ու ստացվող արդյունքի գնահատականը, ինչպես նաև կառավարությունից ստացվող աջակցության գործիքակազմը:

Եզրափակիչ հանդիպում-քննարկումները կազմակերպվել են ***Ֆրանսիական զարգացման գործակալությունում*** (ք. Փարիզ), ոլորտային առանձին այլ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ: Համատեղ հանդիպման ընթացքում, մասնավորապես, ***Ֆրանսիայի գյուղատնտեսության և պարենային ինքնիշխանության նախարարության*** կողմից ամփոփ նկարագրվեցին Ֆրանսիայում գյուղատնտեսության ոլորտի կառավարման հիմնական քաղաքականությունները, առաջիկայում պլանավորվող օրենսդրական փոփոխությունները և այլն: Այնուհետև, ներկայացվել են Ֆրանսիայում գյուղատնտեսական համագործակցության հիմնադիր սկզբունքները, իրավական և կարգավորող շրջանակը, ինչպես նաև գյուղատնտեսական կոպերատիվների գործունեության վիճակագրական որոշ տվյալներ:

Ֆրանսիայի գյուղատնտեսության ակադեմիայի (Académie d'Agriculture de France) կողմից ներկայացվել են ֆերմերներին տրամադրվող խորհրդատվական աջակցության մեխանիզմները, ետպատերազմյա շրջանում (1945-1973թթ.) գյուղատնտեսության արդիականացմանն ուղղված արդյունավետ փորձը, գյուղատնտեսության մեջ երիտասարդ ֆերմերի ներգրավման ու ֆերմերների սերնդափոխության խթանման գործիքակազմը: Անդրադարձ է կատարվել նաև Ֆրանսիայում գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումների գործում «Կրեդիտ Ագրիկոլ» բանկի ունեցած նշանակալի դերին:

Անասնաբուծության գագաթնաժողովի (Sommet de l'Elevage) նախագահի կողմից ներկայացվել են Ֆրանսիայում անասնապահության կազմակերպման հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները, կազմակերպվող ամենամյա «տոնավաճառի» մանրամասներն ու պետության քաղաքականության առաջնահերթությունները ոլորտին ուղղված աջակցության գործում: ***Հողային փորձագետների կոնֆեդերացիայի*** (Confédération des Experts Fonciers) նախագահի կողմից ներկայացվել են Ֆրանսիայում գյուղատնտեսական նշանակության հողատարածքների կառավարման փորձը, ետպատերազմյա ժամանակաշրջանում իրականացված բարեփոխումներն ու տարածաշրջանային Հողաշինության և գյուղական բնակավայրերի ընկերությունների (Société d'Aménagement Foncier et d'Etablissement Rural) դերն

ու նշանակությունը գյուղատնտեսության մեջ հողատարածքների արդյունավետ կառավարման գործում: ***«Ֆրանսիական ֆերմերները և միջազգային զարգացումը»*** (Agriculteurs Français et Développement International) ընկերության փորձագետի կողմից ներկայացվեց Ֆրանսիայում կոպերատիվների ձևավորման և հողային ռեսուրսների ապակենտրոնացված կոնսոլիդացման փորձը:

Ամփոփելով այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպում-քննարկումների արդյունքները՝ ***Ֆրանսիական զարգացման գործակալության*** պաշտոնյաների կողմից ներկայացվեցին գործակալության կողմից գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերի առաջնահերթությունները ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների ներքո, խոսվեց մինչ օրս իրականացված հաջող ծրագրերի, տարածաշրջանում գործակալության կողմից ներկայում իրականացվելող ծրագրերի մասին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այցի շրջանակներում կայացած հանդիպումների ընթացքում ֆրանսիական կողմի տարբեր կառույցների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ աշխատանքային մակարդակում պահպանելու հաղորդակցությունը Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների ու գյուղատնտեսության կառավարման ոլորտներում իրականացվող բարեփոխումների մշակման փուլում ֆրանսիական փորձի առավել խորը ուսումնասիրության և հնարավոր ներդրման ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հաշվի առնելով ջրային ռեսուրսների կառավարման ու գյուղատնտեսության ոլորտում Ֆրանսիայի գրանցած նշանակալի առաջընթացն ու առանձնահատկությունները (մասնավորապես՝ պարենային ինքնաբավության ապահովման պետական առաջնահերթությունը)՝ առաջարկվում է հիշյալ ոլորտներում հետագայում իրականացվող

բարեփոխումների ու քաղաքականությունների մշակման ընթացքում առաջնորդվել ֆրանսիական կողմի փորձով՝ միևնույն ժամանակ օգտվելով թվայնացման ու ավտոմատացման գործող համակարգերի տեղակայման հնարավորությունից և համադրելով բարեփոխումների ծավալներն ու առաջնահերթությունները Հայաստանի Հանրապետության կարողությունների և հնարավորությունների հետ:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

Սուրեն Մինասյան

17 ապրիլի, 2024թ.